

963

05.23.03

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ
ԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՄԱՐԳԱՐԻՏ ԱՐՏԱՇԵՍԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՀԵՂԵՂԱՅԻՆ ՀՈՍՔԵՐԻ ՀԻՂՐԱՎԼԻԿԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԵԹՈԴՆԵՐԻ
ԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾՈՒՄԸ

Ե.23.03-«Շենքերի և կառույցների ճարտարագիտական (էներգետիկ,
հիդրավիկ և այլն) ապահովում» մասնագիտությամբ տեխնիկական
գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման
ատենախոսության

Ս Ե Ղ Մ Ա Գ Ի Ր

ԵՐԵՎԱՆ 2014

МИНИСТЕРСТВО ОБРАЗОВАНИЯ И НАУКИ РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ

НАЦИОНАЛЬНЫЙ УНИВЕРСИТЕТ
АРХИТЕКТУРЫ И СТРОИТЕЛЬСТВА АРМЕНИИ

АРУТЮНЯН МАРГАРИТ АРТАШЕСОВНА

УСОВЕРШЕНСТВОВАНИЕ МЕТОДОВ ГИДРАВЛИЧЕСКОГО
УПРАВЛЕНИЯ ЛИВНЕВЫХ СТОКОВ

А В Т О Р Е Ф Е Р А Т

диссертации на соискание ученой степени кандидата технических
наук по специальности 05.23.03-"Инженерное
(энергетическое, гидравлическое и др.)
обеспечение зданий и сооружений"

ЕРЕВАН 2014



Ատենախոսության բեման հաստատվել է Հայաստանի ազգային ագրարային համալսարանում:

Գիտական ղեկավար՝ տեխնիկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր՝ Ս.Ս. ՂԱԶԱՐՅԱՆ:


Պաշտոնական ընդդիմախոսներ՝ տեխնիկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Ա.Ա. ՍԱՐՈՒՄՆԱՅԱՆ, տեխնիկական գիտությունների թեկնածու, դոցենտ Գ.Ա. ԱԼՈՅԱՆ:

Առաջատար կազմակերպություն՝ «Հայջրնախագիծ ինստիտուտ» ՓԲԸ :

Պաշտպանությունը կայանալու է 2014 թ. դեկտեմբերի 16 -ին ժամը 15⁰⁰-ին, ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարանին կից գործող ՀՀ ԲՈՂ-ի 030 "Ճարտարապետություն և շինարարություն" մասնագիտական խորհրդի նիստում, հետևյալ հասցեով՝ 0009, ք.Երևան, Տերյան փ. 105:

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ՃՀԱՀ-ի գիտական գրադարանում, հետևյալ հասցեով՝ 0079, ք.Երևան, Մառի փ. 17/1: Սեղմագրին կարելի է ծանոթանալ ՃՀԱՀ-ի պաշտոնական կայքում www.ysuac.am Սեղմագիրը առաքված է 2014թ.-ի նոյեմբերի 14 -ին:

Մասնագիտական խորհրդի գիտական քարտուղար, ճարտարապետության դոկտոր, պրոֆեսոր

 Ս.Ս. ԳԱՍՊԱՐՅԱՆ

Тема диссертации утверждена в Национальном аграрном университете Армении.

Научный руководитель: доктор технических наук, профессор КАЗАРЯН С.М.

Официальные оппоненты: доктор технических наук, профессор САРУХАНИЯН А.А.

кандидат технических наук, доцент АЛОЯН Г.А.

Ведущая организация: ЗАО "ИНСТИТУТ АРМВОДПРОЕКТ"

защита состоится 16-го декабря 2014г. В 15⁰⁰ часов на заседании специализированного совета 030 "Архитектура и строительство" ВАК РА, действующего при Национальном университете архитектуры и строительства Армении по адресу: 0009, г.Ереван, ул. Теряна 105.

С диссертацией можно ознакомиться в научной библиотеке НУАСА по адресу: 0079, г.Ереван, ул. Марра 17/1.

С авторефератом можно ознакомиться на официальном сайте НУАСА www.ysuac.am.

автореферат разослан 14-го ноября 2014г. Ученый секретарь специализированного совета, доктор архитектуры, профессор  ГАСПАРЯН М. А.



11-963

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Աշխատանքի արդիականությունը: Ներկայումս քաղաքաշինությունը գրավում է ավելի ու ավելի շատ տարածքներ, և որքան այս գործընթացը զարգանում է, այնքան ավելանում են դրա հետ կապված խնդիրները: Առանձնակի մտահոգություն է առաջացնում բազմաթիվ բնական գործընթացների դադարումը կամ դրանց վերափոխումը նմանատիպ այլ արհեստական գործընթացներով: Մասնավորապես, դա վերաբերում է բնության մեջ ջրի շրջապտույտին: Մթնոլորտային տեղումներից առաջացած ջրերը այլևս չեն կարող ազատ հոսել բնական հունով: Ցամաքուղային համակարգը փոխարինում է գետին: Այս գործընթացի հետևանքով էլ հոսքը արագանում և խախտվում է բնական հավասարակշռությունը: Մակերևութային հոսքի արագացման արդյունքում նվազում են ստորերկրյա ջրերը, ոչնչանում են բուսական ծածկույթը և կենդանական աշխարհի բնակավայրերը, առաջանում են փոշու ալիքներ: Այս ամենը բերում է համակարգի մանրակրկիտ ուսումնասիրման անհրաժեշտության, ինչը պետք է կատարվի քաղաքի և նմանատիպ տարածքների պլանավորման և նախագծման հետ միասին: Աշխատանքում տրվում են գաղափարներ, տեխնիկական մեթոդներ, որոնք թույլ են տալիս հանգել արդյունավետ լուծումների, ինչպես նաև տեսական և փորձարարական համապատասխան հաշվարկների հաջորդականություն, ինչը կապահովի արդյունավետ նախագծման ընտրությունը՝ կանխարգելելով քաղաքային և նմանատիպ տարածքը վթարներից, որոնք բերում են ֆինանսական և մարդկային անվերադարձ կորուստներ և պահանջ առաջացնում ժամանակակից համընդհանուր խնդրի լուծման անհրաժեշտության:

Հետազոտության նպատակն է.

- հստակեցնել և մշակել մթնոլորտային տեղումների հեղեղաջրերի հոսքի քննկերությունները,
- տալ քաղաքային և նմանատիպ տարածքներից դրանց հեռացման սխեմաները և կառույցները, ներկայացնելով այդ ուղղությամբ կիրառված մեթոդները,
- հիմնավորել նրանց որակական գնահատականը և մշակել հաշվարկման նոր մեթոդներ՝ կապելով այն ուսումնասիրության վիճակի և կատարելագործման միջոցառումների հետ, սկսած տեղումների ռեժիմների հիմնավոր գնահատումից, վերջացրած ճաղացանցերի անվթարայնության ապահովմամբ,
- հիմնավորել տարածքների հեղեղային ջրերի առավելագույն քանակությունը, տալով նրանց որակական գնահատականը հավանականության տեսության պահանջներին համապատասխան:

Հետազոտության խնդիրը վերաբերում է հեղեղային հոսքերի քանակության գնահատմանը, ինչպես տվյալների բազմատարյա առկայության, այնպես էլ նրանց ոչ բավարար կամ բացակայությունների դեպքերում:

Ուսումնասիրության մեթոդիկան է փորձարարական, տեսական և նմանակման սկզբունքները՝ կիրառելով նաև մաթեմատիկական վիճակագրության և հավանական բաշխվածության վերլուծությունները:

Հետազոտության օբյեկտը և առարկան կարող են հանդիսանալ քաղաքային և նմանատիպ տարածքները, որտեղ հավաքվում են մթնոլորտային տեղումների առավելապես կիրառումը, ներկայացնելով տեղումների և նրանց հեղեղաջրերի հոսքի վերածանգ գործընթացի պահանջում է գործընթացի բոլոր տարրերի ճիշտ գնահատում և համապատասխան ցանցերի արդյունքի ցանցի պարամետրերի հաշվարկում և նախագծում:

Հետազոտության գիտական նորույթը համարվում է քաղաքային և նմանատիպ տարածքների անվթար ջրահեռացման համար հաշվարկման կատարելագործված մոդելի կիրառումը, ներկայացնելով տեղումների և նրանց հեղեղաջրերի հոսքի վերածանգ գործընթացի քանակական վերլուծությունը: Հետազոտվել, լուծվել և ներկայացվել են հիդրոլոգիական, հիդրավիկական և հավանականության տեսության հետևյալ խնդիրները.

1. Հեղեղային ջրերի հոսքի առաջացումը և նրա կանխարգելումները,
2. հեղեղային ջրերի հոսքի կինեմատիկական տարրերը և հավասարումները,
3. մակերևութային հեղեղային հոսքի կինեմատիկական հավասարումների լուծումները և տեղումների բաշխվածության գնահատումը,
4. հեղեղային ջրերի հոսքի ձևավորման հավանականությունը և վտանգը:

5. Ներկայացվել է հեղեղային ջրերի հեռացման դրենաժային համակարգի մշակված սխեման իրեն տարբերով, հիդրավիլիկական հաշվարկի բլոկ սխեման և ալգորիթմը, լուծման արդյունքները թվային օրինակների մեկնաբանումով:

Չետազոտության գործնական նշանակությունը: Ատենախոսական աշխատանքում բազմակողմանիորեն ուսումնասիրվել է առաջարկվել է համալիր ճարտարագիտական մոդելներ քաղաքային և մասնատիպ տարածքներից մթնոլորտային հեղեղաջրերից առաջացած հոսքաջրերի քանակության գնահատման և կանոնավոր կերպով հեռացնելու խնդիրների լուծումները: Ջրհեռացման ցամաքուրդային ցանցի պարամետրերի գնահատման և հաշվարկման համար լայն կիրառություն կունենա ներկայացրած բլոկ-սխեման, ալգորիթմը և հաշվարկման արդյունքները, որը իրականացված է թվային օրինակով:

Պաշտպանության ներկայացվում են՝

- հեղեղային ջրերի հոսքերի առաջացումը և նրա կանխարգելումները,
- հեղեղային մակերևութային ջրերի հոսքի կինեմատիկան,
- մակերևութային հեղեղային հոսքի կինեմատիկական հավասարումների լուծումները և տեղումների բաշխման գնահատականը,
- հեղեղային ջրերի հոսքի ձևավորման հավանականությունը և վտանգը:

Չետազոտության արդյունքների հավաստիությունը: Աշխատանքում ստացված հետազոտությունների արդյունքները կիրառվել են «Չայջրնախագիծ ինստիտուտ» ՊՓԲԸ և «Երևան» ջրօգտագործողների ընկերության կողմից: Կան համապատասխան ներդրման տեղեկանքներ:

Ատենախոսության հրատարակումները: Ատենախոսության հիմնական դրույթներն ու հետազոտության արդյունքները հրատարակված են 7 գիտական հոդվածներում:


Ստացված արդյունքների հրատարակումները: Կատարված աշխատանքների մասին գիտական գեղարվեստական ներկայացվել է ՉԱԱԳ-ի միջազգային կոնֆերանսներում (2007, 2008, 2009, 2010, 2014 թթ), Չիդրոմեխիկոսիայի, հողաշինարարության և հողային կադաստրի ֆակուլտետի կոնֆերանսներում (2008, 2009, 2010, 2014 թթ.), ՉՏԿ և մեխիկոսիայի ամբիոնի սեմինարներում (2008, 2009, 2010, 2014 թթ.) և այլն:

Աշխատանքի կազմը և ծավալը: Ատենախոսական աշխատանքը, ներառյալ գրականությունը և հավելվածները շարադրված են 143 էջ՝ համակարգային շարվածքով: Այն բաղկացած է աշխատանքի ընդհանուր բնութագրից, չորս գլուխներից, եզրակացություններից և առաջարկություններից, գրականության ցանկից և հավելվածներից: Նյութը լուսաբանված է 13 աղյուսակներով և 51 նկարներով: Գրականության ցանկում բերված է 94 աղբյուր:

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԴՍԱՈՒՄՈՑ ԲՈՎԱՆԴԱՎՈՒԹՅՈՒՆ

Առաջին գլխում «Չեղեղային ջրերի հոսքի առաջացումը և նրա կանխարգելումները», լուսաբանված են մթնոլորտային տեղումների հեղեղային ջրերի հոսքի առաջացումը և նրա կանխարգելումները:

Պարագրաֆ 1.1-ում տրված է գրական ակնարկ հեղեղային ջրերի հոսքի առաջացման և նրա կանխարգելման միջոցառումների վերաբերյալ: Նշվում է, որ քաղաքային տարածքների ջրհեղեղներից առաջացած ջրահեռացման խնդիրներով և դրա հետ կապված ցամաքուրդային ցանցի նախագծման և իրականացման հետազոտական աշխատանքներով զբաղվում են աշխատի շատ երկրներ դեռևս վաղ ժամանակներից: Դրանք ընդգրկում են ծավալով իրականացված են արտասահմանյան երկրներում, առավելապես Անգլիայում, ԱՄՆ-ում և այլ երկրներում, որոնց մասին արտացոլված է ատենախոսության գրականության ցանկում: Խորհրդային երկրներում և մասնավորապես Չայաստանում հիմնարար աշխատանքները անվիճելի են Գ.Կ. Ժելեզնյակովի, Ի.Ա.Շիլևոմանովի, Ն.Բ. Բարիշնիկովի, Վ.Գ. Բիկովի, Լ.Կ. Դավիդովի, Ա.Ի. Չերտայեվի, Ա.Մ. Մուսայեյանի, Լ.Ա. Չիլինգարյանի, Վ.Գ. Մարգարյանի, Գ.Ա. Աբրահամյանի, Գ.Կ. Թոքմաջյանի, Բ.Գ. Սնացականյանի Ա.Մ. Դաբարյանի և շատ ուրիշների աշխատանքներում: Չետազոտությունները ցույց են տվել, որ մթնոլորտային տեղումների հեղեղային ջրերը և նրանցից առաջացած հոսքերը փոփոխվում են և տարածության մեջ, և ժամանակի ընթացքում և, որ բնորոշ է, նրանց միջև կապը հնարավոր չէ վատահորեն մերկայացնել որևէ ֆունկցիայի տեսքով: Սա է հիմնարար պատճառը, որ տարբեր գիտնականների կողմից ներկայացրած ֆունկցիոնալ կապերը նկատելիորեն հակասում են հիդրոդինամիկայի սկզբունքներին:



Նկ. 1. Տեղումներից հեղեղաջրերի հոսքի առաջացման և կանխարգելման մեխանիզմի սխեման
 1. մայ, 2. անձրև, 3. ջրի հավաք, 4. ջրանքափանց մակերևութներ, 5. ջրատար ճոռ, խողովակ, 6. ճանապարհ, 7. ջրատար, 8. ջրանքափանց մակերևութներ, 9. ջրորոշ անցք, 10. տեղումների առումը բուսականությամբ, 11. հոսքի կանխարգելումը ռելիեֆի ցածր մասերում, 12. հոսքի ժամանակավոր կանխարգելման ջրավազան, 13. հեղեղաջրերի հեռացման խողովակ, 14. ջրահեռացման խողովակ


Այդ նկատառումներով ներկայացված աշխատանքը, միացնելով ընդհանուր միջոցառումներին, օժանդակում է կատարելու հետազոտական աշխատանքներ, որոնցում ընդգրկվում են մաթեմատիկական մոդելավորման, ինժեներական մոտեցումների և նրա հաշվողական տեխնիկայի կիրառման սկզբունքները, որով կհիմնավորվի ջրային հոսքի մեխանիկական գործընթացը և կտրվի ջրահեռացման համակարգի հիմնավորված նախագիծ (նկ.1): Ելնելով գրականության ակնարկից ձևակերպվել է հեղեղաջրերի և նրանից հոսքի առաջացման, գնահատման և հեռացման ցամաքուրդային ցանցի նախագծման հետազոտման խնդիրները, որոնցում ներառվում են՝ 1) տեղումների հեղեղային ջրերի հոսքերի առաջացումը և կանխարգելումները, 2) մակերևութային ջրերի հոսքի կինեմատիկան, 3) կինեմատիկական հավասարումների լուծումները և տեղումների բաշխման գնահատումը 4) հեղեղային ջրերի հոսքի հավանականությունները և վտանգը: **Պարագրաֆ 1.2-ում** մեկնաբանված է հեղեղային ջրերի հոսքի կառավարման մեթոդները և գործընթացների մեխանիզմը: Չեղեղային ջրերի հոսքի հեռացման համար ցամաքուրդային ցանցի հիմնավոր նախագծումը բավարար չէ տարածքները

ջրհեղեղներից պաշտպանելու համար: Փորձերը ցույց են տվել, որ հուններում առաջանում են մեծ ողողումներ և որ կարևոր է նաև քաղաքային տարածքները պետք է ձեռքբերել ջրային մեծ հոսքերից իրենց աղտոտվածություններով հանդերձ: Այս տեսակետով անհրաժեշտություն է զգացվում կիրառել հեղեղային ջրերի հոսքի կառավարման մեթոդներ, որի տեսքում կայանում է նվազեցնել ցամաքուրդային ցանցի ծանրաբեռնվածությունը, նախօրոք օժանդակ ջրամբարների, պարզարանների, ջրորոշ կառուցվածքների և մեխանիկայի այլ տեսակի միջոցառումների նախագծում, ինչպես նաև գործող ջրային կուտակումների անվթար շահագործման միջոցառումների իրականացումը և պահպանումը: Չեղեղային հոսքի կառավարման, կարգավորման հիմնարար միջոց է նրա կուտակումը արհեստական ջրամբարներում: Կուտակիչ ջրամբարները համախ կոչվում են հունային ավազաններ կամ ելքամասում կարգավորվող ավազաններ: Ջրամբարը կցվի տեղումների առաջացման սկզբնական շրջանում, որը կազդի հեղեղաջրերի հոսքի ելքի վրա, կարելի է նաև հոսքը տեղափոխել արտահունցային ավազան, ջրի կողային հեռացմամբ: Նկ. 2-ում ցույց է տրված ներհոսքի կանխարգելման հունային ավազանի ազդեցությունը հեղեղաջրերի հոսքի վրա, իսկ նկ 3-ում արտահունցային ավազանի դեպքում: Ատենախոսական աշխատանքում բերված են նաև հոսքի ժամանակավոր կանխարգելման ավազանի հիդրոգրաֆները: Կարգավորման ջրավազաններում գրաֆիկի օրդինատները որոշելու համար տեղումների


տևողության և ինտենսիվության միջև կապի գրաֆիկի օրդինատները բազմապատկում ենք հոսքի տևողությամբ և հոսքի C գործակցով ստացված օրդինատները տալիս են հոսքի ինտեգրալ կորը՝ ծավալ-ժամանակ կորրոկինատներով: Տեղումների ինտենսիվության համար գոյություն ունի հետևյալ կապը՝

$$i = \frac{a}{(b+t)^c} \quad (1)$$

որտեղ t-ը՝ տեղումների թափման ժամանակահատվածն է, a-ն, b-ն, c-ն՝ հաստատուններն են, որոնք համապատասխանում են տվյալ վայրի և հեղեղի T պարբերականությանը:



Նկ. 2. Դունային ավազանի ազդեցությունը հեղեղաջրերի հոսքի լրիվ կանխարգելման վրա
1.բարձր ապահովվածությամբ հաշվարկային հեղեղներ, 2.ցածր ապահովվածությամբ հաշվարկային հեղեղներ, 3.գագաթի կտրուկը բացակայում է, 4.արտահոսքի հիդրոգրաֆներ, 5.գագաթի կտրում:




Նկ. 3. Արտահունային ավազանի ազդեցությունը հեղեղաջրերի հոսքի լրիվ կանխարգելման վրա
1.բարձր ապահովվածությամբ հաշվարկային հեղեղներ, 2.ցածր ապահովվածությամբ հաշվարկային հեղեղներ, 3.արտահոսքի հիդրոգրաֆներ:

Անհրաժեշտ ծավալը կորոշվի հետևյալ կերպ՝ $W=CAat/(b+t)^c - Qt$, որտեղ A-ն ջրհավաքի մակերեսն է:


W-ի առավելագույն արժեքի պայմանից կունենանք՝ $Q/CA=a(b+t-ct)/(d+t)^{c+1}$: (3)

t-ն ընդունելով որպես պարամետր կառուցված է W/CA և Q/CA կորերը (Նկ. 4.), որտեղից կարելի է որոշել տեղումների կրիտիկական տևողությունը և W ծավալը: Թափված անձրևաջրերի մի մասը ներծծվում է հողի մեջ, որի արագությունը կարելի է որոշել $V=k/n$ բանաձևով, որտեղ n-ը հողի ծակոտկենությունն է, k-ն՝ ներծծման գործակիցը:


Պարագրաֆ 1.3-ում մեկնաբանվում է բնության մեջ ջրի շրջապտույտը և նրա տարրերը: Ներկայացվում է ջրի շրջապտույտի տարրերը, որպես մթնոլորտային տեղումների, մակերեսային հոսքի և գոլորշիացման գործընթացների միասնություն: Մթնոլորտային տեղումները հանդես են գալիս անձրևի, ձյան և կարկուտի տեսքով, որի զգալի մասը կամ գոլորշիանում, կամ ներծծվում է հողում, կամ ձևավորում է մակերեսային հոսք: Տեղումները կթափվեն այն ժամանակ, երբ ամպում ջրային գոլորշու ջերմաստիճանը կնվազի ցրդի կետից: Բնության մեջ ջրի շրջապտույտի պարզ նմանակումը բերված է ատենախոսության նկ. 1.6 սխեմայում: Մթնոլորտային տեղումների տևողությունը ընթանում է 5 րոպեից 2 ժամ, իսկ հաճախականությունը 2-100 տարի: Նկ. 5-ում բերված է տեղումների միջին ինտենսիվության հաճախականության և տևողության կախվածության, իսկ նկ. 6-ում տեղումների գումարի և դրանց տևողության կախվածության գրաֆիկները, որոնք կառուցվել են փաստացի չափման տվյալներով նկ. 7-ի պոլիգոնի համար:



Նկ. 4. Դոսքի կանխարգելման համար ջրավազանի մախագծման մախնական տապում տիպային կորեր,




Նկ. 6. Տեղումների գումարի, դրանց տևողության և ինտենսիվության կախվածության գրաֆիկ




Նկ. 8. Զրհավաքի տվյալ կետում չափած ռեդուկցիայի գործակիցները տեղումների միջին ինտենսիվության որոշման համար


ա. ըստ ջրհավաքի կտրվածքի, որով տրվում է սահմանի վրա տեղումների ինտենսիվության հարաբերությունը նրա կենտրոնի ինտենսիվության վրա, բ. տեղումների ռեդուկցիայի գործակիցը ջրհավաքի վրա



Նկ.5. Տեղումների միջին ինտենսիվության, հաճախականության և տևողության կախվածության գրաֆիկ




Նկ. 7. Զրհավաքում տեղումների գումարի չափման միջինացման պոլիգոններ
1. Զրհավաքի սահմանները, 2.պոլիգոնի կողմ, 3.տեղումնաչափ, 4.տեղումնաչափերը միացնող և պոլիգոնի որևիցե կողմին ուղղահայաց գիծ:



Կախված ջրհավաքի կենտրոնից ունեցած հեռավորություններից տեղումների միջին ինտենսիվության որոշման համար նկար 8-ում բերված են համապատասխան գրաֆիկներ ռեդուկցիայի գործակիցների որոշման համար ինչպես նաև տեղումների ինտենսիվության փոփոխությունը գնահատելու ըստ ժամանակի ջրհեղեղի առաջին պահից նկ. 9: Է տեղությունը անձրևի ժամանակ թափված տեղումների գումարը կորոշվի հետևյալ բանաձևով

$$P = i_{\text{միջ}} t_L = \frac{at_L}{(b+t_L)^c} \quad (4)$$



Նկ. 9. Տեղումների ինտենսիվության փոփոխությունն ըստ ժամանակի ջրհեղեղի առաջին պահին

Չեռևարար կարելի է գրել՝

$$i = \frac{dP}{dt} = \frac{a[(1-c)t + b]}{(t+b)^{c+1}} \quad (5)$$


որտեղ i -ն t պահին տեղումների վայրկենական ինտենսիվությունն է: Եթե դիտարկենք $t = t_1 + t_2$

որտեղ t_1 -ն հեղեղի տևողությունն է, t_2 -ը՝ անձրևինը, ապա կունենանք՝ $t = \frac{t_1}{r} = \frac{t_2}{(1-r)}$ (6)

որտեղ r -ը հիետոգրամայի գագաթի տեղափոխության չափն է հեղեղը սկսվելուց հետո (նկ 10),


$$i_1 = a[(1-c)t_1 / (r + b)] / [t_1 / r + b]^{c+1} \quad (7)$$

$$i_2 = a[(1-c)t_2 / (1-r + b)] / [t_2 / (1-r) + b]^{c+1} \quad (8)$$



Նկ. 10. Ջրհեղեղի հաշվարկ

1. Ինտենսիվության և տևողության կապը, 2. արհեստական հիետոգրամ, 3. A գումարով տեղումները հավասար են B տեղումների գումարին:



Պարագրաֆ 1.4-ում Դիտարկված է հեղեղային ջրերի հոսքի կամխարգելումները և կորուստների որոշումը:

Երկրի մակերևույթի վրա թափված տեղումների զգալի մասը հոսքի չի վերածվում, այն կորչում է կամ անմիջապես, կամ էլ հոսելով թափվում է գետը: Ջուրը կարող է կորչել անվերադարձ, օրինակ տրանսպիրացիայի կամ գոլորշիացման միջոցով: Կարող է վերադառնալ գետ ստորերկրյա ջրերի տեսքով, կամ էլ կուտակվել ցածր վայրերում, կամ խորդուբորդ մակերևույթներում: Տեղումների մի մասը պահվում է նաև բուսական և այլ ծածկույթներով: Չեղեղի ժամանակ հողի մեջ ներծծման արագությունը աստիճանաբար կնվազի, որը որոշվում է հետևյալ բանաձևով՝ $f = f_y + (f_0 - f_y) \exp(-kt)$, (9)


որտեղ f -ը ներծծման արագությունն է t պահին, k -ն՝ ներծծման արագության նվազման

գործակիցն է, f_y -ը՝ ներծծման հաստատված արագությունը, f_0 -ն՝ ներծծման սկզբնական արագությունը: Եթե ընդունենք, որ ջրի հոսքի Q -ն և տեղումների P

ինտենսիվությունը համեմատական են ապա կունենանք՝ $\frac{Q}{P} = \frac{S}{S_H}$, (10)

որտեղ S -ը՝ ստորգետնյա ջրերի ավելացումն է ջրավազանում S_H -ը պաշարը հագնելու պահին:

Նկար 11-ում ներկայացված է այդ կախվածության կորը:



Նկ. 11. տեղումների գումարի և ներծծման կորուստների կախվածության կորը

Քանի որ $S = P - Q$, ապա կունենանք


$$Q = \frac{(P - 0.2S_H)^2}{P + 0.8S_H} \quad (11)$$

երբ $P \leq 0.2S_H$, $Q=0$:

Ջրհոսքի ինդեքսները CN կախված են ջրի առավելագույն կուտակման հետ հետևյալ

կախվածությամբ $S_H = \frac{25400}{CN - 254}$, (մմ) (12)

Նկ 12-ում բերված են S կորերի եզակի հիդրոգրաֆները:



Նկ. 12. S կորերի կառուցումը եզակի հիդրոգրաֆներով
1. S-կոր (S_1), 2- է ժամով ուշացող S կոր (S_2), 3. t_1 ժամու թափված տեղումների 1 սմ շերտի եզակի հիդրոգրաֆներ
4. ($S_1 - S_2$) t_1 է ժամում թափված տեղումների 1 սմ շերտի եզակի հիդրոգրաֆներ

Պարագրաֆ 1.5-ում տրված է հեղեղային ջրերի հոսքի կանոնավորման խնդիրները: Չեղեղային ջրերի հոսքի կանոնավորման խնդիրը նրա բանալայության հիմնավորումն է և ջրահեռացող ցանցի նախագծումը իր պարամետրերով և հաշվարկային ելքով: Նախ դիտարկենք հաշվարկային ելքի որոշումը երբ առկա են տեղումների վերաբերյալ տվյալները, որով կարելի է որոշել տեղումների ինտենսիվությունը և անցում կատարել հոսքի ինտենսիվությանը: Նման մեթոդը ընդունված է անվանել արդյունավետ, որն առաջին անգամ կիրառվել է Իոլանդիայում ինժեներ Մալվանի կողմից, Անգլիայում՝ Լոյդ Դեվիսի կողմից: Օգտագործելով նաև ենպիրիկ կախվածությունները կարելի է գրել՝ $Q = CiA$, (13)

որտեղ A -ն ջրհավաքի տարածքի մակերեսն է ($մ^2$), i -ն տեղումների ինտենսիվությունն է ($մ/վ$), Q -ն հոսքի ելքն է ($մ^3/վ$), C -ն անչափակազմ մեծություն է, որը բնորոշվում է տեղումների բնույթով, նա հոսքի ծավալի և տեղումների ծավալի հարաբերությունն է, խիստ ասած C -ն հոսքի առավելագույն ինտենսիվության հարաբերությունն է տեղումների միջին ինտենսիվության վրա: Հիդրոգրաֆի ձևը կարելի է պարզել էլենելով ջրհավաքի պարզ ուղղանկյուն մոդելից: Ցանկացած t պահին, եթե ջրհավաքի երկարությունը X է, ապա հոսքի ելքը կլինի $C \cdot i \cdot A \cdot \frac{X}{L}$: Եթե հոսքի


կոնցենտրացիայի ժամանակը կախված չէ ելքից կունենանք $\frac{X}{L} = \frac{t_x}{t_i}$, (14) որտեղ t_x -ը հոսքի

կոնցենտրացիայի ժամանակն է ջրհավաքի X հեռավորության վրա: Եթե


հեղեղը դադարում է t_k պահին, ապա հիդրոգրաֆը վեր է ավելում եռանկյան՝ $2t_k$ հիմքով և 13 C-ի որոշման համար հայտնի է մի շարք ենթադրյալ բանաձևեր, որոնք բերված են ատենախոսությունում: Արդյունքում կունենանք հաշվարկային ելքի համար հետևյալ բանաձև.

$$Q_p = i \sum_{j=1}^m C_j a_j, \quad \sum_{j=1}^m a_j = A; \quad (15)$$


(13) բանաձևով կհաշվարկվի ջրհավաքի հոսքի հաշվարկային ելքը և կկատարվի ցամաքաբերային ցանցի նախագծումը: Երկրորդ մեթոդը հաշվարկային ելքի որոշման և համակարգի նախագծման համար համարվում է տապալի մեթոդը: Այս մեթոդի դեպքում հաշվի է առնվում այն ժամանակը, որի ընթացքում հոսքը հասնում է յուրաքանչյուր ցամաքաբերային նրա կուտակման ընթացքում: Ատենախոսական աշխատանքում բերված է նախագծման օրինակ թվային լուծումներով, որը հաշվարկված է նկար 15-ի ջրհավաքի կիրառմամբ: արդյունքները բերված են աղյուսակ 1-ում:



Նկ. 13 (a) հոսքի և (b) տեղումների ընթացքը ժամանակի ընթացքում ա) հիետոգրամնա բ) հիդրոգրաֆ



Նկ. 14 (a) տեղումները և (b) հոսքը հաշվարկային ջրհավաքի դեպքում



Նկ. 15. Ջրհավաքի օրինակ ցամաքաբերային չափերի որոշման համար
1. Ջրհավաքի սահման,
2. մասնակի ջրհավաքի սահման,
3. փակվող ուղղահատված, 4. հոսքի ուղղություն,
5. ցամաքաբերային խողովակ,
6. բողարկման անցք

Աղյուսակ 1

Ցամաքաբերային չափերի հաշվարկ ենթատապալի մեթոդով

Խողովակների NN	Ջրհավաքի մասնակի մակերես A_i (մ ²)	C գործակիցը	Ջրհավաքի օղորտի մակերեսը (մ ²)	$\sum CA$ (մ ²)	Խողովակի երկարությունը l_i	Մղմուսի քիչությունը %	t_k	i (մ/մ)	Q (մ ³ /վ)	Խողովակի տրամագիծ (մ)	V (մ ³)	$\Delta t_i = \frac{l_i}{V}$
1,1	15000	0.5	7500	7500	180	0.01	180	69	0.48	480	2,7	67
2,1	5000	0.5	2500	2500	90	0.02	120	69	0.173	250	2,7	33
3,1	8000	0.7	5600	5600	80	0.01	150	69	0.389	440	2,5	30
2,2	7000	0.6	4200	12300	50	0.008	153	66	0.817	620	2,8	18
1,2	14000	0.3	4200	4200	100	0.0025	247	59	1,417	950	1,9	53

Երկրորդ գլխում «Չեղեղային մակերևութային ջրերի հոսքի կինեմատիկան», մեկնաբանվում է հեղեղային մակերևութային ջրերի հոսքի կինեմատիկան:

Պարագրաֆ 2.1-ում տրված է մակերևութային ջրերի հոսքի կինեմատիկական տարրերը, նրանց ճշգրտումը և հավասարումները: Կինեմատիկական մեթոդը թույլ է տալիս լրացնելու արդյունավետ մեթոդի բոլոր բացթողումները, չնայած դրան այստեղ ևս կատարվում է մի շարք ընդունելություններ, այն է՝ յուրաքանչյուր խորության վրա ճնշումը հիդրոստատիկական է, հունը ուղղահայաց է, կողային ներհոսքն աննշան է և այլն: Անխազելիության հավասարումը կարելի է դուրս բերել, հավասարեցնելով ներհոսքն ու արտահոսքը և գումարելով կուտակումները (նկ. 16) կունենանք.


$$\frac{\partial Q}{\partial x} + \frac{\partial A}{\partial t} = q_i, \quad (16)$$

որտեղ Q -ն ջրի ելքն է, A -ն՝ ուղղահայաց կտրվածքի մակերեսը, q_i -ն՝ x -երի ուղղությամբ միավոր երկարությամբ կողային ներհոսքը, t -ն՝ ժամանակը: Կիրառելով շարժման քանակի փոփոխման օրենքը նկ. 17-ի համար կունենանք.


$$g \frac{\partial y}{\partial x} + V \frac{\partial V}{\partial x} + \frac{\partial V}{\partial t} = g(S_0 - S_1) - \frac{q_i V}{A}, \quad (17)$$

որտեղ Y -ը տարրի ծանրության կենտրոնի հեռավորությունն է հեղուկի ազատ մակերևույթից, S_0 -ն՝ հատակի թեքությունը, S_1 -ն շփման ուժի գրադիենտն է, V -ն՝ հոսքի արագությունը, A -ն՝ մակերեսը: Հավասարումների լուծումը պարզեցնելու համար կարելի է ընդունել.

$$S_1 = S_0 = S; \quad (18)$$



Նկ. 16. Ջրի շարժման անխազելիության հավասարման դուրս բերելու սխեմա



Նկ. 17. Շարժման քանակի հաշվեկշիռի սխեմա ներհոսքի ուղղությամբ

Որպես առաջին մոտեցում ընդունելով

$$q = zy^n, \quad (19)$$

որտեղ z -ը գործակից է, որը հաշվի է առնում ելքը, S_1 -ն: Լամինար շարժման դեպքում $n=1$, տուրբուլենտ շարժման դեպքում $n=2$: Որոշ ձևափոխումներով կունենանք՝

$$q = 7.7 \frac{(Sg)^{1/2} Y^{5/3}}{k^{1/6}}; \quad (20)$$

Այս հավասարումը լուծելով (16) հավասարման հետ, կունենանք $\frac{\partial q}{\partial x} + \frac{\partial y}{\partial t} = i_0$ (21)

որտեղ i_0 -ն մնացորդային տեղումների ինտենսիվությունն է՝

$$i_0 = i - f, \quad (22)$$

որտեղ i -ն տեղումների ինտենսիվությունն է, f -ը՝ նրա կորուստների ինտենսիվությունը:


Ստացված արդյունքները ցույց են տալիս, որ $\frac{gh}{V^2} > 10$ դեպքում կինեմատիկական հավասարումներն ունեն մեծ ճշտություն, հ-ը ջրհավաքի լայնությանը բարձրությունների անկումն է, V -ն՝ ջրհավաքի ցածրադիր վայրերում հոսքի հաստատված արագությունը: (19) բանաձևից՝

$$y = \left(\frac{q}{z}\right)^{\frac{1}{n}}, \quad (23)$$

$$\frac{dx}{dt} = \frac{dq}{dy} = nq^{1-\frac{1}{n}} z^{\frac{1}{n}}: \quad (24)$$

Նկար 18-ի համար կունենանք՝

$$\frac{dy}{dt} = \frac{\partial y}{\partial t} + \frac{\partial y}{\partial x} \frac{dx}{dt} = \left(i_0 - \frac{\partial q}{\partial x}\right) + \frac{q^{n-1}}{nz^n} \frac{\partial q}{\partial x} nq^{1-\frac{1}{n}} z^{\frac{1}{n}} = i_0, \quad (25)$$



Նկ. 18. Ջուրի խորության փոփոխությունը ջրհավաքի երկարությամբ

որտեղ՝ $\frac{dy}{dt} = i_0$,

հետևաբար՝ $\frac{dx}{dt} = nz(i_0 t)^{n-1}: \quad (26)$

(26) հավասարումից կունենանք

$$x = z \cdot i_0^{n-1} t^n: \quad (27)$$

Չեղելի սկզբում առաջացած հոսքը կհասնի $X=L$ կետին (ջրհավաքի երկարություն) և ժամանակում, որը որոշվում է հետևյալ կերպ՝

$$t_k = \left[\frac{L}{z i_0^{n-1}}\right]^{\frac{1}{n}}, \quad (28)$$

Հետևաբար՝

$$q = zy^n = z(i_0 - t)^n = \frac{z i_0^n L}{z i_0^{n-1}} = L i_0, \quad (29)$$

իսկ՝

$$V = \frac{q}{y} = zy^{n-1}: \quad (30)$$

Նմանապես կունենանք հոսանքի հավասարաչափ վիճակի հասնելու ժամանակը կլինի՝

$$t_h = \left(\frac{L i_0^{1-n}}{z}\right)^{\frac{1}{n}}: \quad (31)$$

$$\text{Հարթության համար կարելի է ցույց տալ՝ } t_h = \frac{1}{n} t_\eta: \quad (32)$$

Ուշացման ժամանակը ($t_{ու}$) տեղումների 50%-ի թափման պահից մինչև 50%-ը հոսելու պահը կլինի՝

$$t_{ու} = \left(\frac{n}{n+1}\right) t_h: \quad (33)$$

$$\text{Քանի որ, մինչև անձրևի դադարելը } q = x i_0, \quad (34)$$

անձրևի դադարից հետո $\frac{dy}{dx} = 0$ և հոսքը ջրհավաքով կսկսի շարժվել հաստատուն արագությամբ, այն է՝

$$\frac{dx}{dt} = nzy^{n-1}, \quad (35)$$

$$\text{հետևաբար } x = x_0 + \frac{dx}{dt}(t - t_L) = \frac{zy^n}{i_0} + nzy^{n-1}(t - t_L), \quad (36)$$


երբ $x = L$,

$$L = \frac{q}{i_0} + nq^{1-\frac{1}{n}} z^{\frac{1}{n}} (t - t_L) \quad (37)$$

Նկար 19-ում ցույց է տրված հիդրոգրաֆի ձևերը:

Չեղելի ավարտին կունենանք

$$y = y_0 - f(t - t_k), \quad (38)$$



Նկ. 19. Չուքաջրերի հիդրոգրաֆի ձևը հեղելի տևողության ժամանակը տեղումների ավելցուկի միևնույն գումարի դեպքում

$$\text{հետևաբար } yL = (i - f)^{\frac{1}{2}} [i(t - t_L)^2 + t_k^2 (i - f)]^{\frac{1}{2}} - i(t - t_L): \quad (39)$$

$$\text{Արտահոսքը կավարտվի } t = t_L + \frac{t_k (i - f)}{(if)^{\frac{1}{2}}}: \quad (40)$$

Ատենախտակաճան աշխատանքում բերված են կորեր, որոնք բնորոշում են ինֆիլտրացիայի ազդեցությունը ջրհավաքից հոսքի վրա:

Պարագրաֆ 2.2-ում բերված է գետային ջրհավաքը և նրա մոդելը իր երկարության (L) մակերեսի (A) չափերով: Ատենախտակաճան աշխատանքում բերված է այդ մոդելի և նրան համապատասխան գետային հոսքի գրաֆիկները (Նկ. 2.7, Նկ 2.8):

Պարագրաֆ 2.3-ում ներկայացված է մթնոլորտային տեղումների ինտենսիվության և նրա տևողության կապի գնահատումը: Չեղելի տևողության և համախտության միջև կապը կարելի է գտնել տարբեր շրջանների տվյալների վերլուծությունով, բնորոշ է, որ յուրաքանչյուր տևողությամբ հեղելի դեպքում տեղումների միջին ինտենսիվությունը հեղելի շարունակությամբ նվազում է: Նշված կապերը գնահատվում են տեղումների

հավասարաչափ բաշխվածության դեպքում: Սկզբնական շրջանում հոսքը անվերադարձ կուտակվում է մակերևութին: Հոսքի կոնցենտրացիայի ժամանակի անալիտիկ որոշման համար կիրառվում են հետևյալ մեթոդներ: Առաջինի դեպքում ընդունվում է, որ ամբողջ կորուստներն առաջանում են հեղեղի սկզբնական շրջանում, երկրորդի դեպքում ընդունվում է, որ կորուստները բաշխվում են հավասարաչափ ժամանակի և տարածության մեջ:

Պարագրաֆ 2.4-ում տրվում է տեղումների տևողության ինտենսիվության կոնցենտրացիայի ժամանակի գնահատումը:


Հետազոտությունները ցույց են տվել, որ հեղեղի ինտենսիվությունը կարելի է որոշել

$$i = \frac{a}{(b+t_L)^c}, \quad (41)$$

հետևյալ բանաձևով

$$i = \frac{a}{b+t_L}, \quad (42)$$

որտեղ t_L -ը հեղեղի տևողությունն է: Սկար 20-ում բերված $i=f(t)$ գրաֆիկը:



Սկ. 20. Մթնոլորտային տեղումների տևողության և ինտենսիվության միջև տիպիկ կախվածություն

Ընդունելով $c=1$ և համակարգի նմանակով

$$t_L = \frac{\left(\frac{Lk^{\frac{1}{6}}}{7.7\sqrt{Sg}}\right)^{\frac{1}{5}}}{\left(\frac{a}{b+t_L} - \frac{s_p}{t_L}\right)^{\frac{2}{5}}} = \frac{F}{\left(\frac{1}{b+t_L} - \frac{U}{t_L}\right)^{\frac{2}{5}}}, \quad (46)$$

որտեղ F -ը ուշացման գործակիցն է՝

$$F = \left[\frac{Lk^{\frac{1}{6}}}{7.7\sqrt{Sga^{\frac{2}{3}}}} \right]^{\frac{3}{5}}, \quad (47)$$


կորուստների շերտի գումարը կարելի է որոշել հետևյալ բանաձևով $S = t \cdot i$: (43) տեղումների հավասարաչափ ինտենսիվության դեպքում կունենանք՝

$$i_{\text{մ}} = i - f = i - \frac{S_p}{t_L} \quad (44)$$

համապատասխան ձևափոխություններից հետո կունենանք

$$t_L = \left(\frac{L}{\left[\frac{a}{(b+t_L)^c} - f \right]^{\frac{1}{c}}} \right)^{\frac{1}{c}} \quad (45)$$

$$U\text{-ը քննարկվում է որպես ինֆիլտրացիայի գործակից՝ } U = \frac{S_p}{a}, \quad (48)$$



Սկ. 21. Առավելագույն հոսք ձևավորող հեղեղային ելքի տևողությունը հավասարաչափ կորուստների դեպքում ($b=0.4$ ժ)

շրջանում ամբողջությամբ կուտակվում են ցամաքուրդների մեջ, ապա հոսք չի առաջանա: Եթե կորուստների գումարը նշանակենք S_u , ապա հոսքի ժամանակը կլինի՝

$$t_u = \frac{S_u}{i}, \quad (51)$$

Առավելագույն ելքի համար՝


$$t_k = t_L - t_u = \frac{\left(\frac{Lk^{\frac{1}{6}}}{7.7\sqrt{Sg}}\right)^{\frac{3}{5}}}{\left(\frac{a}{b+t_L}\right)^{\frac{2}{5}}}, \quad (52)$$

Հետևաբար

$$t_L = F(b+t_L)^{\frac{2}{5}} + I(b+t_L): \quad (53)$$

Սկզբնական առավելագույն կուտակման ցուցիչը I -ն կլինի՝ $I = \frac{S_u}{a}: \quad (54)$

Այս հավասարումը լուծելով t_L -ի և I -ի տարբեր արժեքներ համար կունենանք նկ. 22 և նկ. 23 գրաֆիկները



Սկ. 22. Հաշվարկային հեղեղի տևողությունը (b=0.4 ժ) սկզբնական կորուստների դեպքում, որը ձևավորում է առավելագույն հոսք

Պարագրաֆ 2.5-ում մեկնաբանվում է մակերևութային հոսքի կորուստների գնահատումը: Տեղումների հոսքի կորուստները պայմանավորված են բուսականության և տանիքների վրա կուտակումներով, էվապորացիայի և տեղումների մեջ կուտակումներով և ինֆիլտրացիայով: Ժամանակի ընթացքում կորուստների նվազող ինտենսիվությունը կարելի է ներկայացնել սկզբնական կորուստների տեսքով գումարած տեղումների ժամանակ հավասարաչափ բաշխված տեղումները: Այդուհանդերձ 2-ում բերված է ընդունելի նշված կորուստների չափը՝

Այլուսակ 2.

Ջրավաթի մակերևութի վրա տեղումների սկզբնական և հավասարաչափ կորուստները

Մակերևութի տիպը	Սկզբնական կորուստները, մմ		Հավասարաչափ ինֆիլտրացիայի ինտենսիվություն
	անվերադարձ կուտակում	ինֆիլտրացիա	
Ասֆալտապատ ճանապարհ	< 1	---	0
Կավ	< 5	20	2-5
Կավակազ	< 5	30	5-15
Ավազային գրունտ	< 5	40	12-25
հաստ բուսականություն	< 12	---	---

Դիտարկենք խնդրի լուծման լուսաբանումը թվային օրինակով: Պահանջվում է հաշվել հեղեղաջրերի առավելագույն ելքը 20 տարին մեկ անգամ հաճախականությամբ, ջրհավաքի լայնությունը 500 մ, երկարությունը՝ 2000 մ, $i=1/500$, $K=10$ մմ բացարձակ խորոլքորոնությամբ, ինֆիլտրացիան $t=20$ մմ /ժամ, $a=90$ մմ, $b=0.4$ ժամ: Հոսքի ուշացման

գործակիցը կլինի.

$$F = \left(\frac{2000 \cdot 0.1^{\frac{1}{0.6}}}{7.7 \sqrt{9.81 \cdot 5000 \cdot 0.009^{2/3}}} \right)^{0.6} = 151 \text{ վ}^{0.6}$$

Ընդհանուր կորուստների համար հավասարաչափ, անվերադարձ կուտակման ցուցանիշը.

$$\frac{U}{t_L} = \frac{20}{90} = 0,222 \quad 1/\text{ժամ}$$

Սկ. 21-ից կունենանք հեղեղի տևողությունը 2.2 ժամ է հետևաբար $U = 0.48$: Սկ. 23-ից

$$\frac{i_{\text{սկ. max}}}{a} = 0,16 \text{ 1/ժամ:} \quad \text{կամ } i_{\text{սկ. max}} \cdot 90 = 14,4 \text{ մմ/ժամ:}$$

Հեղեղաջրերի առավելագույն ելքը կլինի $14,4 \cdot 500 \cdot 2000 : (3600 \cdot 1000) = 4,0 \text{ մ}^3/\text{վ}$

իսկ՝

$$C = \frac{i_{\text{սկ. max}}}{i_{\text{սկ. max}} + S/t_L} = \frac{14,4}{14,4 + 20} = 0,42$$

Երրորդ գլխում «Մակերևութային հեղեղային հոսքի կինեմատիկական հավասարումների լուծումները և տեղումների բաշխման գնահատումը», դիտարկվում է հեղեղային հոսքի կինեմատիկական հավասարումների լուծումները և տեղումների բաշխման գնահատումը:

Պարագրաֆ 3.1-ում գնահատվում է կինեմատիկական հավասարումների լուծման քանակական մեթոդը: Այստեղ հաշվի է առնվում այն փաստը, որ հեղեղի ինտենսիվությունը ազդում է ջրհավաքում հոսքի կոնցենտրացիայի ժամանակի վրա, տարածության մեջ փոփոխվող հեղեղի և կորուստների, ինչպես նաև թեք լանջերում և հոսքի հուններում հաշվարկման վրա:

Պարագրաֆ 3.2-ում պարզաբանվում է տեղումների տեղաբաշխման ազդեցությունը հոսքի վրա: Կինեմատիկական հիմնական հավասարումներն են՝ անխափության հավասարումը՝

$$\frac{\partial y}{\partial t} + \frac{\partial q}{\partial x} = i_{\text{սկ}}, \quad (55)$$

կամ՝

$$q = \frac{7.7 \sqrt{Sg}}{k^{\frac{1}{6}}} y^{\frac{5}{3}}, \quad (56)$$

նշանակելով՝

$$z = \frac{7.7 \sqrt{Sg}}{k^{\frac{1}{6}}}, \quad n = \frac{5}{3} \quad (57)$$

(55) –ից կունենանք

$$i_{\text{սկ}} = - \frac{0.6}{q^{0.4}} \left(\frac{7.7 \sqrt{Sg}}{k^{\frac{1}{6}}} \right)^{0.6} \frac{\partial q}{\partial t} + \frac{\partial q}{\partial x}$$

նշանակելով

$$P = \frac{q}{L i_{\text{սկ. միջ}}}, \quad I = \frac{i_{\text{սկ}}}{i_{\text{սկ. միջ}}}, \quad \bar{X} = \frac{x}{L}$$


հավասարումները կրեթվեն անչափակազմ տեսքի

$$T = \left(\frac{z i_{\text{սկ. միջ}}}{L} \right)^{\frac{1}{n}} t = \frac{7.7^{0.6} (Sg)^{0.3} i_{\text{սկ. միջ}}^{0.4} t}{L^{0.6} k^{0.1}} \quad (59)$$

իսկ (58)-ը կընդունի հետևյալ տեսքը՝

$$\frac{\partial P}{\partial t} = 2.2 P^{0.4} \left(I - \frac{\partial P}{\partial X} \right) \quad (60)$$

Որտեղ P -ն մնացորդային տեղումների հոսքի առավելագույն ինտենսիվության հարաբերությունն է միջին ինտենսիվությանը: Կարելի է ցույց տալ, որ $T = t/t_k$: (61)



Սկ. 24. Ժամանակի մեջ տեղումների եռանկյուն բաշխվածությանը հիդրոգրաֆներ

Հիդրոգրաֆի ճյուղի վերելքը ջրհավաքի վերջում կնկարագրվի հետևյալ բանաձևերով՝

$$q = i_{0.6} \cdot L \left(\frac{t}{t_k} \right)^{\frac{5}{3}}, t_k = \frac{L^{0.6} k^{0.1}}{7.7^{0.6} (Sg)^{0.3} i_{0.4}^{0.4}}$$

$$P = T^{\frac{5}{3}}: \quad (62)$$

Անկման ճյուղը $t = t_k$ -ից հետո կնկարագրվի հետևյալ ոչ բացահայտ հավասարումով՝

$$L = z y_L^{n-1} \left[\frac{y_L}{i_{0.6}} + \frac{n(t-t_k)}{y_L} \right], \quad (63)$$

Հիդրոգրաֆի վերելքի և անկման ճյուղերը բերված են Սկ. 24-ում

երբ $t_L = t_k$ -ի կունենանք՝
$$T = 1 + \frac{1-P}{5/3 P^{0.4}} \quad (64)$$

Պարագրաֆ 3.3-ում տրված է տեղումների անկանոն բափման և անհավասարաչափ բաշխվածության որակական գնահատականը:

(60) հավասարումը լուծելով վերջավոր աճերի մեթոդով, երբ $\Delta X = 0.05$ -ի և երբ,


$$\Delta T = \Delta X \text{-ի կստանանք} \quad P(X_1, T_2) = \left(\frac{2.2 \Delta T}{2} \right)^{\frac{5}{3}} \quad (65)$$

